ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 մարտի 2011թ. № 15

ք. Բյուրեղավան

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի № 286 որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետի գ) ենթակետը, 21-րդ կետը և Անդրանիկ Պետրոսյանի դիմումը՝ **ավագանին որոշում է.**

1. Քաղաքացի Անդրանիկ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի թիվ 12/33 հասցեի 88,70քմ հողատարածքով կաթսայատան (սեփականության վկայական №2677567 տրված 2010թվականի ապրիլի 28-ին) սպասարկման նպատակով Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող 2-րդ փողոցի թիվ 12/33/1 հասցեի բնակավայրերի կատեգորիայի 87,40քմ մակերեսով հողամասը(սեփականության վկայական № 2741750 տրված 2011թվականի մարտի 01-ին) ուղղակի վաճառել Անդրանիկ Պետրոսյանին որպես սեփականություն, գործող կադաստրային գնահատման արժեքով՝ 256956 (երկու հարյուր հիսունվեց հազար ինը հարյուր հիսունվեց) դրամ, քանի որ նշված հողամասը չի կարող օտարվել որպես առանձին միավոր :
2. Ուժը կորցրած ճանաչել Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2010թվականի սեպտեմբերի 14-ի № 44 որոշումը:

Ավագանու անդամներ՝

կողմ - 7 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ա. Ասոյան _____

Հ. Բաղդասարյան _____

Ա. Դանիելյան _____

Ա. Եղիազարյան _____

Վ. Հայրապետյան _____

Գ. Մարգարյան _____

Ա. Շառյան _____

Համայնքի ղեկավար՝ Հ. Բալասյան